

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես Բազմ. 1925, էջ 29)

ՃԱ.

Կ'արժէ հրատարակել հետեւեալ նամակը, պարզապէս տալու համար Հալէպի մէջ տեղի ունեցած կրօնական բաժանումի անդրանիկ շրջանէն զլիաւոր մէկ քանի կարգադրութիւնները:

Ամենապայծառ և գերյարգելի տեւան տեսան Արքայապետ Միսիրաբ
Աստուածաբանութեան Վարդապետին կենանք երկար

... Թէ քաղաքիս և եղբայրութեան որպիսութիւնն հարցանիշիք, յետ բազում նեւ ղուժեան հալածանաց և տուքանաց ձերին սուրբ աղօթիք մօտ Գ ամ է որ ի փոքր եկեղեցին սուրբ Աստուածածին յայտնի ուղղափառութեամբ վարիմք. սուրբ Աստուածն թարց խաչեցարիւ, Գ անուն հերձուածոց ոչ յիշեմք. կաթողիկոսին անուան տեղ սուրբ Գրիգոր լուսաւորչին յիշեմք. ամէն օր Ե պատարագ լինի, կիրակիք և տօն աւուրց աւելի լինի... մեր հալապեցի Աղոր վարդապետն եպիսկոպոս ձեռնադրեցաւ Բերիյ և սահակ վարդապետն փլիսու եպիսկոպոս եղև և տէր մարգարն մէրտինու եպիսկոպոս ձեռնադրեցաւ ի Հալէպ և Գերապայծառ Աբրահամ եպիսկոպոսն՝ կաթողիկոս եղև Հայոց. և քաղաքացիքն մեր հօնէթ և արգ արարին սիսու կաթողիկոսին աւիրութեան. և ակոր վարդապետին անուան պէրաթ և Ֆէրման խընդրեցինք՝ իբրազ լինելու ի սիսու աթոռէն և մին մարդ յղեցաք ըստանալով որ Ֆրանսացոց յելլիսին ձեռքն բանն լինելու և նայ օր թէ ձգելով պատրիարքէն կաշառ էաւ և մեր յղած արգն պատրիարքին տվաւ, թէ ձեր բանն կու յինէ ձեր ուզածին պէս և նայ... ավէտիք անուան պէրաթն արաւ, մեր արգովն եկ ի հալէպ չար արեղան պէրաթով զաբթ արաւ աստուածածին եկեղեցին. յետոյ.. Բ ամաց Քնաց ձեռքն է օր. Զ քէսայ քրամ վատեանց մինչ հմուտ եկեղեցին. յետոյ.. կրկին և միջ ի քէսայ քրամ վատեանցաք՝ հօնէթիներու և Ֆէթմաներու պուրթիներու մոււ ճալով (?) որ ունէաք՝ առաջմանէ զի աղօթիցեմք ընդ քահանայիւք մերով, որպէս կա... միմջ սուրբ աստուածն թարց խաչեցարի և Գ անուն ոչ յիշել կրկին պիուրթի եղև մեղ աղօթել որպէս որ էաք, բայց չար ավետիք աքեղան միշտ հալածում յարուցանէ ի վերայ եղբարք. երբէք ոչ հանդարտի ի չարէ. զիշեր և ցերեկ ի գուռն բռնաւորաց է. երբ տեւ սաք թէ ոչ հանդարտի ի բարութենէ այժմ կրկին արգ արարինք նորա աւիրութեան թէ քան զսիսու կաթողիկոսն ալ առաւել չար և քնասակար է, կամովք զակոր վարդապետն պէրաթով ի վերայ մեր զի քաղաքացի յէ և զիտէ որպիսութիւն մեր և յղեցաք արգն մեր վէթիլ եղեալ մարդու և սպանեմք պէրաթին գալստեան...: Ֆրանսացոց հին յէլլիսէն բազում քնաս կրեցաք արգին կողմանէ որ պատրիարք թէսլնամ արաւ և զմեզ խնդ

ողորմելի արաւ և գերի պատրիարքին... Դարձեալ Գերայագելի հայր իմ միշտ ցան-
կամք զի ի քաղաքէն մերոյ մին քանին գտանիցի ի ձեր միաբանութեան...»

Գերապայծառ և գերայագելի հայրութեանդ
Ամենայնի խոնարհագունեղ ծառայ պատրաստական
Գէորգ Յառաքելեան

Յամի տեառն 1741
յամսնան օգոստոսի
ի հալէպ

ՃԲ.

Մեր վանական պատմութեան ու նաև ազգային գեղարուեստի կեանքին ի նպաստ
հետաքրքրական ու միանգամայն զուարճալի թուղթ մ'է հետեւեալը, որուն ստորա-
գրողն է «պատկերաւսն Յովնանէն»։ Այս անձը ծանօթ է արդէն Մխիթարայ Հաս-
տատութեանս, որոյ մէջ աղօթաւայրին, այն է Ս. Բենեդիկտոսի մատրան խորանին
համար գծած է, — Հիմնադրիս առաջարկով, — նոյն Սուրբին նկարը, որ ցայսօր պա-
հուած է, Կը Խօսի նաև Ս. Յովսեփայ պատկերի մը շինութեան մասին, թէ՛ արդեօք
վանքիս Եկեղեցւոյ Աւանդատան համանուն խորանին պատկերն է։ Ըստ երևոյթի՝
նոյն նկարչի գործ չի թուիր. յամենայն ղէպս զեռ հաստատուն փաստ մը չունինք
ձեռքերեմա։

Հայ արուեստագէտիս թուղթին մէջ կը գտնենք նաև յիշատակութիւն մը Ասսե-
մանիի մասին, սակայն առանց անուան, որով չենք կրնար հաստատապէս ըսել թէ
որ Ասսեմանին է. բուն երեկելի արեւելագէտը (որ գրած է Մխիթարայ մասին այս-
պէս. «Թէ՛ բարեպաշտութեամբ և թէ՛ գիտութեամբ երեկելի անձ մ'է, ինձ ալ մտերիմ
բարեկամ») թէ՛ անոր թողը Ստեփաննոս—Էվօզ Ասսեմանի (1702—1782), շարու-
նակողն անոր համբաւին։ Որոշ փաստ մը զեռ չունենալով ձեռքերեմա՝ կը համարենք
որ աւելի վերջինս ըլլայ, այն՝ որ Հաւատոյ Տարածման կողմէ իբրև Մխիթար
երկար առեն Արեւելը ալ գտնուած է, և հուսկ Հոռովայ մէջ մեծանուն արեւելագէտին
յաջորդ կը կարգուի, անոր մահուանէն վերջ, Վատիկանեան Մատենադարանի Գրա-
պետութեան պաշտօնին մէջ։

Մեր նամակագիրը թերևս նախորդէն զանազանելու համար է որ զայս կ'ա-
նուանէ «մարտիրոսայտ մօնսինեօք ասիւսանիս»։

Գերայագելի և գերապատուելի տէրութեան ձերում
սիրով և խոնարհաբար սուրբ աջն համբարեմ

... Վասն սրբոյն պնէտիքոսոսի պատկերի կողմանէ յայտ լիցի Գերայարքելութեան
ձերում պատճառն չուարկելոյս, երբ տիրացու երեմեան ճանապարհորդ եղև թէպէտ
պատկերն վերջացուցեր էի, որպէս ինքն տեսաւ, քայց ոչ էր քաւականապէս չորացեր որ
փաթթէի և զութու մէջ դնէի. վասն որոյ ետո մնաց. ետոյ տասնպորտեան տղին հնա
կարէի ուղարկել, Սուրբն ովսէփ արքելեց զսուրբն Պնէտիքոսոս, թէ սպասէ մինչև և ես
պատրաստիմ ի միատեղ ճանապարհորդ լիցուք, արժամայն նոյն սուրբն Պնէտիքոսոսն
հաճեցաւ ձաւ և ըսպասել պատրաստութեան սրբոյն ովսէփու որ և միատեղ ճանապար-
հորդ լիցի։ Վասն որոյ և ես որդիական համարձակութեամբ աղաչեմ զամենապատուելի
հայրիդ իմ վասն նոյն սուրբ ովսէփա խաղեր ինձ ներուռն շնորհես, երկարապէս ըսպա-
ցեցեր վասն սուրբ Պնէտիքոսոսի խաթ[ե]ր, փօքր ինչ ևս համբերել ի պատիւ սրբոյն
ովսէփայ...

Այսօր ալիկուռնաու գիր արի որ պետքուս կաթողիկոսն ընդ իւր մի հպսկոպոս, մի վարդապետ և մի տիրացու ծովով ճանապարհ ելած է տեղս գալու, մարտիրոսայու մոնսինեօր ասիմանին գրած էր թէ իւրեան տուն պատրաստէ. յաժմօ ինքն Ալիկուռնայու Վրդանէն հպսկոպոսին գրած է թէ եկեղեցին տեղ պատրաստէ, ինձ մէկ նեղութիւն և ձանձրութիւն է դորայ այս եկեղեցին գալն, տարի երկու ամիս պատկերահանութիւն չեմ կարելոք անել կամ եկեղեցեայ ծառայութիւն՝ կամ եկող զնաքողաց զահմէթ և իւղմէթ...:

ամի տեան 1741

օգոստոսի 4

[Հոգով]

Խոնարհագրոյ ծառայ
պատկերահան Յոհաննէս

ՃԳ.

Դաժան և անսիրտ արարքի մը նկարագրութիւնը տալէ վերջ՝ այսպէս կը գրէ Հ. Թէոդորոս. «Ի ձեռն վերապատուեցելոյ տեառն տեառն Յակոբ վարդապետին և էրզրումեցւոյ և Առաքելական Միասինարի Հայոց, որ է ի Կարգէ Սրբոյն Անդօնի և ժամանեցէ ի Բէշէր վարատինն ».

Օ: Յ: Գ:

Վերապատուելի և սիրելի Հոգևոր Հօր և Եղբոր խնում ի Տէր,
բազմաւ սիրով և մեծաւ կարօտիւ մատուցանեմ զՅիսուսաւանդ ողջոյն, և այլն:

... Աստէն ահի մեծաւ տաղանային բովանդակ ազգն հայոց, մի՛ զուցէ ապտամբ, բիցի մանաւ ազգն, և զբովանդակ ազգն մեր տառթուր հարկանիցէ, և բնաշինչ տունիցէ: Աստ ի մեր քաղաքն եկեալ էր կոստանդինուպոլսեցի Տէր Պօղոսն, որ է որդի Արմատցի մղտեսի սարգսի հաջագործի. սա՛ աւելի քան զօթն ամիս աստ եկաց, և ընդ երկուց պայազատ մանաւաղ զբարեկամութիւն ըստացաւ ի գեղ մի, և զբազում բարեկամութիւն արար նոցա. վերջապէս այժմ մինչ կամեցաւ չուել աստի՛ ծանոց նոցա զգնալն իւր. և մինչ ի ն[ո]ցանէ զերիս աւուրս առ նմա եկաց աստ, և եկի ընդ նմա, և ի չուելն նորա՝ ուղղաւորեաց զնա մինչև էանց զգիւղ մի, և ի մորտը՛ հսպան զվերոստաւ, ցեալ Տէր Պօղոսն կարի անողորմաբար, և զմի վաճառական Պատի անուամբ առ ի մահ վիրաւորեաց տասամբ հարուածով կեցնոյ, և մազապուրծ գերծաւ ի մահուանէ: Այժմ կալեալ են զԱւագակն, և եղեալ են ի բանտի. Ան՝ այսպիսի բարեկամք են մանաւ ազգն՝ ազգին հայոց. որք ի ներքոյ պատրուակի սուտ բարեկամութեան, ջանան ըմպել զարիւնն յերակաց Հայոց: Խեղբիւմ ուրեմ, զի ըստ բաղձանաց սրտիս գրիցես և պատմ միցես ինձ զկացքն Տէրութեանդ, թէ զորպիսի հանգստութիւն ունի, և որպիսաբար կեանս այդր, և որքան հայք գտանին այդր. և զիմրդ կեանս: Զվննայի վարունքերն ասեն ահերեալ գոյ. և Պաւարուն ընդ Ֆրանձուզին մերձեցեալք են առնուլ զվննայ. Տէր Յիսուս պարգեւեցէ զնաղաղութիւն և զմիաբանութիւն ի մէջ Թագաւորաց Քրիստոնէն... ԶԿեւելայի Տէր Մինաս Աւագ Երէցն իջուցեալ են ի պաշտօնէ, և արտաքսեալ ի քաղաքէն, որ ի քսան վեց ամաց հետէ եղեալ էր Աւագէրէց անդ, և զայնքան բարեւորութիւնս արարեալ էր քաղաքին: Եւ այսօրիկ բնաւից պատճառն է չքահանայ մի Տէր Նիկօլ անուամբ...:

Նուաստագունեղ ծառայ

Հայր Թէոդորոս Յովաննիսեան

Կրօնաւոր և Վ. ի Կարգէ սրբոյն Անդ. Աբբայի

Յամի Տեան 1741

հոկտեմբերի 25, ի Պաշխով,

որ այլով անուամբ կոչի Երզրապէթապօլիս

(Շարունակելի)

Հ. ՂԵՆԻՆՆԻ ՏԱՅԵՆՆԸ .